«1. Հէնց այստեղ և այժմանից նշանակել վերագրաւած վայրերի համար գաւառական, գաւառակային և գիւղական կոմիսարներ՝ հաշուելով դրանց պետական պաշտօնեաներ, ներկայացնել նախահաշիւ և խնդրել Խորհրդից վարկ այդ ծախքերը գոցելու համար:

2. Հէնց այստեղ և այժմանից կազմակերպել իւրաքանչիւր գաւառի համար ձիաւոր միլիցիայի կազմեր՝ 100—200 մարդ ամէն մի գաւառի համար:

3. Ադմինիստրացիան նախօրօք, կամ գաղթականութեան առաջին հոսանքի հետ միասին գնում է գիւղերը և կարգաւորում գաղթականներին ընդունելու և տեղաւորելու գործը:

4. Գլխաւոր ճանապարհների վրա ունենալ սննդատու կայաններ բժշկա-ֆելդշերական բաժիններով միասին, նախ՝ գաղթականութեան դիւրութիւն տալու համար և երկրորդ՝ գաղթականական հոսանքը մի ճանապարհով տանելու նպատակով, որպէսզի նա չփռուի ամէն կողմ և հսկողութիւնից ազատ լինելով՝ զանազան անախորժութիւններ չառաջացնի:

5. Ճանապարհների վրա, որոշ կէտերում, ունենալ շրջիկ ձիաւոր պահակներ՝ ճանապարհների ապահովութեան համար:

6. Ժամանակաւորապէս արգելել ոչ-տեղացի գաղթականներին գնալ այս կամ այն գաւառը: Օրինակ, ոչ-սուրմալուեցի գաղթականը ժամանակաւորապէս իրաւունք չունի Սուրմալու գնալու, մինչև որ տեղացիները գնան ու տեղաւորուեն: Երբ սրանք գնացին ու տեղաւորուեցին և երևաց, որ ազատ գիւղեր ու տեղեր էլի մնում են, այդ դէպքում կարող են և ոչ-տեղացի գաղթականներն ևս գնալ Սուրմալու և այնտեղ տեղաւորուել:

7. Զօրքի հետ միասին և միաժամանակ վերագրաւած վայրերն են գնում և պարենաւորման գործի ներկայացուցիչները՝ տեղերում պարենաւորման խնդիրը լուծելու համար:

8. Գաղթականութեան վերադարձի ու տեղաւորման գործի բարձրագոյն ղեկավարութիւնն ամէն մի գաւառում իրենց վրա են վերցնում Խորհրդի մէկ-մէկ անդամները, ի հարկէ, նոյն գաւառից՝ պարլամենտական կոմիսար անունով»:

Այս ձևով էլ տարուեց գործը:

Մայիսի վերջերին արդէն Թիւրքիոյ պարպած բոլոր շրջանները՝ Շիրակ, Կարս ու Կաղզուան, Կողբ ու Սարդարապատ, Սուրմալու ու Վեդի Բասար՝ բնակեցուած էին վերադարձած գաղթականներով, որոնք ագահութեամբ կպան վերաշինական աշխատանքի: Կազմակերպուեց, այդ վայրերում, և վարչութիւնը, պարենաւորման գործը, և կեանքը կամաց-կամաց սկսեց բարելաւուել:

*

Արտաքին քաղաքականութեան մէջ գլխաւոր տեղը գրաւում էր, ի հարկէ, հայ-վրացական պատերազմը և դիւանագիտական ու տնտեսական յարաբերութիւնների կարգաւորումը Հայաստանի և Վրաստանի միջև: Մարտից սկսած Հայաստանի համար բացուեց Եւրոպայի և Ռուսաստանի ճանապարհը Թիֆլիս—Բաթումի վրայով: